ՀՀ Տավուշի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի՝ ոչ պետական հատվածում ընդգրկվելու հայտեր ներկայացնելու մասին

Մարզում երիտասարդական քաղաքականության արդյունավետության բարձրացման, երիտասարդության հարցերին առնչվող պետական, մարզային և համայնքային մարմինների համագործակցության ապահովման նպատակով նախատեսվում է ստեղծել մարզպետին առընթեր երիտասարդական խորհուրդ:

Խորհրդի ոչ պետական հատվածի համար հայտ ներկայացնելու կանոնադրական չափանիշներն են՝

1.Տարիքը՝ 16-30 տարեկան

2 Երտասարդներին առնչվող կրթական, սոցիալական, զբաղվածության, առողջապահական, և մշակութային խնդիրներին տիրապետելը:

3.Երիտասարդական կազմակերպություններում տարբեր ծրագրերին կամ միջոցառումներին մասնակցության փորձ:

4. Երիտասարդական քաղաքականության բնագավառում միջազգային փորձի, պետական և հանրային կառավարման համակարգի, ծրագրերի մշակման, իրականացման և գնահատման առանձնահատկությունների իմացություն:

Խորհրդի կազմում ընտրությունը կատարվում է մրցութային կարգով:

Խորհրդի կազմում ընդգրկվելու հայտերը կարող են ներկայացվել Դիլիջանի համայնքապետարան (Մյասնիկյան 55) մինչև 15. 02. 2020թ. ժամկետում: